ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐ ՄԱՐԶ
ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔ

Համայնքի 2025 թվականի

ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆ

Կազմել է՝ համայնքի ղեկավար Մխիթար Մաթևոսյան

Հաստատվել է՝ համայնքի ավագանու 2025թ. փետրվարի 14 -ի թիվ 18-Ա որոշմամբ
(նիստի ամսաթիվը)

Վայք 2025

Ներածություն

1. Ներածություն

Տարեկան աշխատանքային պլանի նպատակն է ապահովել տվյալ տարվա համար նախատեսված միջոցառումների իրականացումը: ՏԱՊ-ն ամփոփում է պլանավորված միջոցառումները, արդյունքները և ֆինանսական ներդրումները:

Սույն տարեկան աշխատանքային պլանը կազմված է 2025 թվականի համար:

Այս փաստաթղթի հիմնական նպատակն է նկարագրել Վայք համայնքում 2025 թվականի ընթացքում իրականացվող աշխատանքները:

ՏԱՊ - ում տեղ են գտել միջոցառումներ, որոնց նպատակն է աղքատության հաղթահարումը, տնտեսական աճը, մարդկային ռեսուրսի զարգացումը և սոցիալական իրավիճակի բարփոխումը:

Սույն տարեկան աշխատանքային պլանը գալիս է աջակցելու Վայք համայնքի հնգամյա զարգացման պլանի իրականացման աշխատանքներին:

ՏԱՊ-ի նպատակներն են.

ա. **Համախմբել բոլոր նախատեսվող միջոցառումները հնգամյա զարգացման պլանի նպատակների իրականացման շուրջ,**

բ. Հնարավորության դեպքում սահմանել միջոցառումների իրականացման ժամկետները:

գ. Սահմանել դեռևս ֆինանսական միջոցներով չապահովված միջոցառումների համար ֆինանսավորման ռազմավարությունը:

ՏԱՊ-ն ըստ ոլորտների, կազմել են Վայքի համայնքապետարանի տարբեր բաժինների աշխատակիցները

ՏԱՊ-ի իրագործման ընթացքում ակնկալվում է 2025 թվականի կտրվածքով ստանալ հետևյալ հիմնական արդյունքները.

1) Համայնքի տնտեսության աճի տեմպերի արագացում և դրա հիման վրա շոշափելի արդյունքների արձանագրում.
2) Բնակչության եկամուտների աճ և մարդկային աղքատության կրճատում.
3) Բնակչության զբաղվածության աճ և գործազրկության մակարդակի նվազում.
4) Արդյունաբերության զարգացում.
5) Գյուղատնտեսական արտադրանքի իրացման ծավալների և ապրանքայնության մակարդակի բարձրացում.
6) Համայնքի բնապահպանական իրավիճակի բարելավում.
7) Բնակչությանը տրամադրվող սոցիալական ծառայությունների որակի և մատչելիության աստիճանի էական բարձրացում.

2 ՀԱՄԱՅՆՔԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Համայնքի ընդհանուր նկարագրություն

Վայք

ք. Վայք (1956-1990 թվականներին՝ Ազիզբեկով), քաղաք Վայոց ձորի մարզում, Երևանից 137 կմ հարավ-արևելք՝ Արփա գետի ափին: Վայք է վերանվանվել 1990 թվականի նոյեմբերի 23-ին: Եղեգնաձոր քաղաքից գտնվում է 20 կմ, իսկ Երևան քաղաքից 140 կմ հեռավորության վրա և հանդիսանում է Երևան-Գորիս-Արցախ ճանապարհի հանգույց: Տարածքը հյուսիսից, հյուսիս-արևմուտքից շրջապատված է Եղեգիսի, իսկ հարավից Վայոց ձորի լեռնաշղթաների ճյուղավորությունների խիստ կտրտված և թեք լանջերով, միայն հյուսիս-արևմտյան մասում Եղեգիսի լեռնաշղթայի հարավային ճյուղավորությունների վրա հանդիպում են համեմատաբար հարթեցված հեղեղատարով քիչ կտրտված տեղամասեր: Վայքի տարածքով հոսում է Արփա գետը: Գարնանային վարարումները միջին հոսանքում սկսվում են մարտ ամսվա կեսերից, բարձրակետին հասնում են ապրիլին կամ մայիսին, գետի հաստատուն մակարդակը նկատվում է հուլիսի կեսերին: Վարարումները տևում են 90-120 օր: Գետը սնվում է անձրևաջրերով և ձնհալի ջրերով: Գետի վտակները հեղեղաբեր են: Ձմռանը գետը ափային մասում սառցակալում է: Վայքի տարածքի հողային ծածկույթը խիստ աղքատիկ է:

Ազատեկ

Ազատեկ բնակավայրի կենտրոնի հեռավորությունը մարզկենտրոնից՝ 24 կմ, Վայքից 7 կմ է: Բնակավայրի կենտրոնի բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1625մ է: Ազատեկ անունը ծագել է նախկին Ազատ գյուղի անվանումից: 1828 թվականին Խոյից ու Սալմաստից գաղթած հայերը հիմնում են Ազատեկ գյուղը: Գյուղատնտեսական գործունեության հիմնական ուղղություններն են՝ անասնապահությունը, դաշտավարությունը և այգեգործություն:
Հողեր (ընդամենը)՝ 6685,91 հա, այդ թվում՝գյուղատնտեսական նշանակության հողեր՝ 6542.58 հա, որից՝ վարելահող՝ 785.09 հա, բազմամյա տնկարկ՝ 76.63 հա, արոտ՝ 2577.96 հա,խոտհարք՝ 61.90 հա, այլ հողատեսք՝3041.00 հա, բնակավայրերի հողեր՝ 96.78 հա, արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողեր՝ 20.24 հա,էներգետիկայի, տրանսպորտի, կապի և կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողեր՝ 4.80 հա, հատուկ պահպանվող տարածքների հողեր՝6.62հա, ջրային հողեր՝ 14.89 հա:

Փոռ

Փոռ բնակավայրը գտնվում է Արփա գետի ձախ կողմում, Վայքի լեռների հյուսիսային փեշերին, մարզկենտրոնից՝ 27 կմ հարավ-արևելք: Այն վերաբնակեցվել է 1928 թվականին: Գյուղը շրջապատված է վեհ ու հիասքանչ լեռնաշղթաներով, որոնք հարուստ են ֆլորայով և ֆաունայով: Ազգաբնակչությունը հիմնական զբաղվում է հողագործությամբ, այգեգործությամբ, անասնապահությամբ ու մեղվաբուծությամբ:

Արին

Արին բնակավայրը գտնվում է Հայաստանի Վայոց ձորի մարզում, մարզկենտրոնից՝ Եղեգնաձորից, 22կմ հարավ-արևելք: Արին բնակավայրը ծովի մակերևույթից 1630 մ բարձրության վրա է գտնվում: Արին բնակավայրը հյուսիս-արևելքից սահմանակից է Հերհեր, հյուսիս արևմուտքից՝ Մալիշկա բնակավայրերին: Բնակչությունը զբաղվում է դաշտավարությամբ, անասնապահությամբ, մեղվապահությամբ , այգեգործությամբ: Ցորենը հիմնականում լինում է աշնանացան, իսկ գարին՝ գարնանացան: Համայնքի տարածությունը 6056,31 հեկտար է, բնակելի տարածքը՝34 հեկտար:Գյուղում գործում են՝դպրոց, ակումբ, բուժկետ: Բնակավայրը ունի խմելու ջրի 1 ինքնահոս ջրաղբյուր՝8-լ/վրկ.ելքով:

Բարձրունի

Բարձրունի բնակավայրը գտնվում է Վայոց ձորի մարզի Վայքի տարածաշրջանում: Գյուղը սահմանամերձ բնակավայր է, Վայքի տարածաշրջանից հեռու է 28 կմ, գտնվում է ծովի մակարդակից 1950մ բարձրության վրա: Կլիման ձմռանը ցրտաշունչ է ,ամռանը՝ զով: Տարեկան տեղումների քանակը կազմում է 350-400մմ: Բնական լանդշաֆտները կիսաանապատներ են և չոր տափաստաններ, որոնց մի մասը վերամշակվել են՝ վերածվել կուլտուր- ոռոգելի լանդշաֆտների: Գյուղը հիմնադրվել է 19-րդ դարի սկզբներին, այն վերաբնակեցվել է 1928 թվականին՝ Արեմտյան Հայաստանի Խոյ, Սալմաստ գավառներից ներգաղթված հայերով: Գյուղի կենսագործունեության գլխավոր ճյուղը գյուղատնտեսությունն է: Կլիման նպաստավոր է այգեգործության, հացահատիկային, կերային մշակաբույսերի աճեցման համար: Մարդիկ զբաղվում են անասնապահությամբ ու մեղվաբուծությամբ: Պահուստային հողերը չեն օգտագործվում սահմանամերձ լինելու պատճառով:

Խնձորուտ

Խնձորուտ բնակավայրը գտնվում է ՀՀ Վայոց ձորի մարզի հարավ-արևմտյան հատվածում, սահմանակից է մարզի Նոր Ազնաբերդ, Մարտիրոս, Գնիշիկ գյուղերին և Նախիջևանի Հանրապետությանը: Գյուղը հիմնադրվել է 1827թ. ռուս-պարսկական Գյուլիստանի պայմանագրի համաձայն՝ Պարսկաստանից հայ ազգաբնակչության ներգաղթի արդյունքում: Չնայած բնակլիմայական անբարենպաստ պայմաններին (սակավաջուր, չոր կիսատափաստանային հողերի) գյուղն աստիճանաբար զարգանում է և ապահովում բնակչության աճ: Մինչև խորհրդային կարգերի հաստատումը գյուղը պատկանել է Նախիջևանի նահանգի Շարուր Դարալագյազ գավառին: Խնձորուտը հարևան գյուղերից կտրված է շուրջ 20 կմ-ով և թշնամու (Նախիջևանի) դեմ հանդիման

ունի շուրջ 25կմ սահման: Բնակչության հիմնական զբաղվածությունը եղել է անասնապահությունը և հողագործությունը: Գյուղն ունի դպրոց, բուժկետ:

Մարտիրոս

Մարտիրոս բնակավայրը մեկն է Վայոց ձորի, ինչպես նաև ողջ Հայաստանի այն սակավաթիվ գյուղերից, որի հիմնադրման ստույգ տարեթիվը և հիմնադրողների անունները պահպանվել են: Այդ կարևոր տեղեկությունը արձանագրված է գյուղամիջի մեծ աղբյուրի մոտ 1283թ. վարդագույն գրանիտից կանգնեցված երեք մետրից ավելի բարձրություն ունեցող գեղաքանդակ խաչքարի վրա:Փաստերը վկայում են, որ Մարտիրոսը Պռոշ իշխանի հրամանով կառուցվել է ոչ թե ամայի վայրում, այլ վերակառուցվել է մի գյուղ, որը ունեցել է իր բնակիչները: Մարտիրոսը, իր ավելի քան 700 տարվա պամության ընթացքում, թողել է բազմաթիվ պատմական ու մշակութային արժեքներ: Մարտիրոսի ամենանշանավոր ճարտարապետական հնությունը 13-րդ դարի վիմափոր Սուրբ Աստվածածին վանքն է, որը գտնվում է գյուղից 2,5 կմ հարավ-արևելք: Վանքն ամբողջությամբ կերտված է Նզար սարի ներսում, ստորգետնյա լեռան մեջ: Ըստ պահպանված արձանագրությունների, վանքը 1286 թվականին կառուցել է Մարտիրոս Վարդապետը, իսկ ճարտարապետն է եղել քարագործ Գրիգորիկը: Վիմափոր եկեղեցին Գեղարդից հետո ամենանշանավոր և խոշոր ժայռափոր ճարտարապետական համալիրն է Հայաստանում, իսկ ներքին հնչեղությամբ այն առաջինն է հայ եկեղեցական շինարարության մեջ՝ իր կառուցողական բարձր արվեստով: Սահմանակից բնակավայրերն են՝ հյուսիս-արևելքից՝ Զառիթափը, հարավարևմուտքից՝ Սերսը, Խնձորուտը, հարավ-արևելքից սահմանակից է Նախիջևանի հանրապետությանը: Գյուղի տարածքը բաժանված է երկու ենթագոտիների՝ չոր լեռնատափաստանային և բարձր լեռնատափաստանային:

Սերս

Սերս բնակավայրը ՀՀ Վայոց ձորի մարզի բարձր լեռնային և սահմանմերձ բնակավայրերից է: Սերսն ունի հին ու վաղեմի պատմություն: Հիմնադրման տարեթիվն անհայտ է: Հայտնի է , որ գյուղը պատկանելիս է եղել պատմական Հայաստանի Սյունիք նահանգին: Պահպանվում է գյուղի եկեղեցին, որի հիմնադրման տարեթիվը նույնպես անհայտ է: Սակայն հայտնի է, որ եկեղեցին վերանորոգվել է 1525 թվականին: Գյուղի բնակիչները 1604 թվականին գաղթվել են Շահ Աբասի կողմից: Գյուղը վերաբնակեցվել է 1828 թվականին, պապերը Պատմական Հայաստանի Սալմաստ գավառի Սաֆրա գյուղից գաղթած հայ ընտանիքներով: Սերսը, լինելով սահմանամերձ գյուղ, 1988-1994 թվականներին նորից հայտնվել է պատերազմական իրավիճակում, սակայն իր բնակիչների վճռականության շնորհիվ դարձել է անխոցելի մի ամրոց:Սերս բնակավայրի բնակչությունը հիմնականում զբաղվում է անասնապահությամբ և հողագործությամբ:

Գոմք

Գոմք բնակավայրը գրով հիշատակված է Ստեփանոս Օրբելյանի մեծարժեք երկում: Մեծանուն պատմիչը պարզել է, որ Գոմք գյուղը վեց չափ հարկ է տվել Տաթևի վանքին, ինչն էլ նշանակում է, որ շենը եղել է ոչ շատ մեծ: Գյուղն այդպես էլ հիշատակված է ՝ և հիմնազուրկ է այն ենթադրությունը, թե դա հին Գոմեր գյուղն է: Շենը եղել է ոչ շատ մեծ, սակայն աչքի է ընկել իր մի հրաշալի զարդով, որը մեր բազմադարյան ճարտարապետության եզակի նմուշներից է: Դա որմնափակ խաչքար-մատուռն է՝ իր կառուցվածքով, մտահաղացմամբ, քանդակներով և վիմագիր հիշատակարաններով մի անգնահատելի կոթող: Ըստ պահպանված արձանագրության՝ Խաչքար-մատուռը կառուցվել է 1263 թվականին: Գյուղամիջում գտնվում է եկեղեցու ավերակներ, որն իր ոճով ավելի շատ նման է 16-17-րդ դարերի ճարտարապետական աշխատանքներին: 1989թ-ին լքված գյուղ են եկել Սումգայիթից, Բաքվից, Կիրովաբադից և այլ վայրերից մազապուրծ փախած առաջին հայ բնակիչները: Գոմք բնակավայրը գտնվում է ՀՀ Վայոց ձորի մարզի Վայքի տարածաշրջանի, Ախտա գետի ափամերձ լանջերի վրա, ծովի մակարդակից 1800մ բարձրությամբ: Սահմանակից է Զառիթափ և Արտավան համայնքներին և Նախիջևանին: Բնակչությունը հինականում զբաղվում է անասնապահությամբ ու հողագործությամբ:

Նոր Ազնաբերդ

Նոր Ազնաբերդ բնակավայրը (նախկինում Գյուլիստան) կառուցվել է 1949 թվականին, բնակեցված է եղել ադրբեջանցիներով: 1988թ. հայ-ադրբեջանական դեպքերից հետո այն վերաբնակեցվել է Նախիջևանի Ինքնավար Հանրապետության Զնաբերդ գյուղից Հայաստան փախած հայերով: Գյուղի ընդհանուր տարածքը կազմում է 1191 հա: Գյուղի միջով անցնում է Ջահուկ և Լվիս կոչվող գետակները: Գյուղը սահմանակից է Նախիջևանի Բզկով գյուղին, որի հետ ունի մոտ 5կմ սահման, սահմանակից է նաև Վայք համայնքի Խնձորուտ և Սերս գյուղերին:Ծովի մակերևույթից բարձր է 1630մ: Գյուղը կրթական հաստատություն չունի, երեխաները հաճախում են հարևան Խնձորուտ գյուղի դպրոց:

Կարմրաշեն

Կարմրաշեն բնակավայրը (նախկինում՝ Քյոթանլի, Քյոթանլու) գյուղը գտնվում է Հայաստանի Վայոց ձորի մարզի Վայքի տարածաշրջանի հյուսիսարևմտյան կողմում գտնվող Վայոց լեռան ստորոտում, Հերհեր գետի վերին հոսանքի բարձրադիր սարավանդում: Ծովի մակարդակից բարձր է 2030 մ: Սահմանակից է՝ հյուսիս-արևելքից՝ Ջերմուկ, հարավ-արևելքից՝ Հերհեր, հարավ-արևմուտքից՝ Մալիշկա, հյուսիս-արևմուտքից՝ Գողթանիկ բնակավայրերին: Շրջակայքում կան անտառակներ: Մոտակայքում գտնվող հրաբխային խարամներն օգտագործվում են որպես շինարարական ավազ: Տեղանքը քամոտ է: Գյուղի հիմնադրման տարեթիվը ստույգ չէ: Գյուղի շրջակայքում կան հնավայրեր և պատմաճարտարապետական կոթողներ: Գյուղից մեկ կմ հարավ-արևելք գտնվում է Պողոս-Պետրոս խաչքարը, հարավ–արևմուտքում խարաբաներ գյուղատեղին է, հյուսիս-արևմուտքում՝ Գենգարա գյուղատեղին: Խաչքարերը վերաբերում են 10-13-րդ

դարերին: Ղևոնդ Ալիշանը Կարմրաշենին է նույնացնում Սյունիք աշխարհի Վայոց ձոր գավառում հիշատակվող Գուտենի գյուղը: 1963 թվականին այստեղ հիմնվել էր բանավան՝ Արփա-Սևան ջրատարի բանվոր-ծառայողների համար: Այժմյան գյուղի տարածքը բնակեցվել է 1916 թվականից 1925 թվականն Նախիջևանից ներգաղթածներով, ինչպես նաև Գնդեվազից, Վերնաշենից և այլ վայրերից եկածներով:

Զառիթափ

Զառիթափ բնակավայրը գտնվում է Հայաստանի Վայոց ձորի մարզում, մարզկենտրոնից՝ 27 կմ հարավ-արևելք, Արփա գետի ձախ կողմում: Գյուղը Վայք-Մեղրի մայրուղուց հեռու է 6 կմ:
Զառիթափ բնակավայրը հիմնադրվել է 1829 թ.-ին:Գտնվում է Վայքի լեռնաշղթայի հարավարևելյան մասում: Ծովի մակերևույթից բարձր է 1400-2100 մ: Հյուսիս արևելքից սահմանակից է պետական անտառ-արգելանոցին, արևելքից Գոմք գյուղին, հարավից Մարտիրոս գյուղին, արևմուտքից Փոռ և Ազատեկ գյուղերին:

Գյուղի հյուսիսային սահմանով անցնում է Արփա գետը: Գյուղը փռված է յոթ բլուրների վրա, գյուղամիջով անցնում է Փշոնք գետը, որին միանում են չորս փոքրիկ վտակներ:Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, պտղաբուծությամբ, բանջարաբուծությամբ:Ընդհանուր հողատարածքը կազմում է 5346 հեկտար, որից՝ մշակովի հողերը՝ 3860 հեկտար վարելահողերը՝ 485 հեկտար, այգիներ՝ 12 հեկտար, արոտավայրեր՝ 3050 հեկտար:

Արտավան

Արտավան բնակավայրը գտնվում է Վայոց ձորի մարզի Վայքի համայնքում՝ Վայք-Սիսիան խճուղու աջ կողմում, մարզի հարավարևելյան մասում: Հյուսիսից և արևելքից սահմանակից է Սարավանին, արևելքից՝ Սյունիքի մարզին, հարավ-արևելքից՝ պետական սահմանին /Ադրբեջանի Հանհապետություն/, հարավից և հարավ-արևմուտքից՝ Գոմքին, արևմուտքից՝ Զառիթափին, հյուսիս-արևմուտքից և հյուսիսից՝ Գնդեվազ գյուղական բնակավայրերին: Գյուղը հիմնադրվել է 10-18-րդ դարերում: Մինչև 1949 թվականը գյուղը կոչվել է Ջուլ, որը համապատասխանում է գյուղի այժմյան տարածքին: Բնակչությունը ռուս- պարսկական պատերազմի տարիներին ներգաղթել է Խոյ, Սալմաստ գավառներից, նախ բնակվել է Ախաչ գյուղում, ապա այնտեղից տեղափոխվելև վերաբնակվել Ջուլում: Գյուղը վերաբնակեցվել է 1949թ. մարտ ամսից ու վերանվանվել՝ Արտավան: Գյուղը գտնվում է ծովի մակերևույթից 1860մ բարձրության վրա: Կլիման ձմռանը ցրտաշունչ է , ամռանը՝ զով: Հաճախակի են չորային, երաշտի տարիները: Գյուղից վերև բարձրաբերձ գագաթներով սարեր են, որոնց լանջերից բխող աղբյուրները խմելու և ոռոգման ջուր են մատակարարում գյուղին: Գյուղի տնտեսության գլխավոր ճյուղը գյուղատնտեսությունն է: Հիմնականում զբաղվում են հողագործությամբ և անասնապահությամբ:

Զեդեա

Զեդեա բնակավայրը 1988 թվականի նոյեմբեր ամսից վերաբնակեցվել է Նախիջևանի շրջանի Ազնաբերդ գյուղից արտագաղթած հայերով: Այն փռված է Վարդաբլուր և Հարսնասար լեռների ստորոտում՝ ծովի մակերևույթից բարձր է 1500-1600 մ: Գյուղն ավելի հին է քան ենթադրվում է, որի վկայությունն են զարդաքանդակներով խաչքարերը և հունական տառերով գերեզմանաքարերի արձանագրությունները, ինչից կարելի է ենթադրել, որ այստեղ ապրել են հայեր, հույներ,

ադրբեջանցիներ, որից հետո այս գյուղում իրենց հանգրվանն են գտել Նախիջևանից տեղահանված հայերը: Գյուղի շրջակայքում կա երկու հին գյուղատեղիներ: Գերեզմանաքարերի արձանագրություններից ենթադրվում է, որ գյուղերից մեկը հունական է եղել: Հին հայկական գերեզմանոցի մոտակայքում հայտնաբերվել է ջրաղաց, ինչը թույլ է տալիս ենթադրել, որ գյուղի բնակիչները նախկինում էլ զբաղվել են հացահատիկի մշակությամբ: Բոլոր ժամանակներում գյուղի հիմնական եկամտի աղբյուրը եղել է հողագործությունը և անասնապահությունը: Մինչև 1988 թվականը գյուղն անվանվել է Զեյթա, իսկ 1988 թվականի վերաբնակեցումից հետո՝ Զեդեա: Ըստ Ստեփանոս Օրբելյանի՝ դեռ միջնադարում գոյություն է ունեցել Վայոց ձոր գավառի Զեդյա գյուղը: Գյուղի պատմության վերաբերյալ այլ մանրամասներ չկան: Գյուղը գտնվում է ՀՀ Վայոց ձորի մարզի հյուսիս արևելյան մասում: Սահմանակից է մարզի Ագարակաձոր, Վայք, Մալիշկա ու Ազատեկ համայնքներին: Գյուղի տարածքով անցնում է Արփա գետը:

Հեհրեր

Հերհեր բնակավայրի բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, հացահատիկի, կերային կուլտուրաների մշակությամբ և պտղաբուծությամբ:Հերհերից մոտ 1 կմ հյուսիս-արևելք գտնվում է VIII դարից հիշատակվող Սուրբ Սիոն մենաստանը՝ կազմված երկու եկեղեցուց և մատուռից: Հերհերում՝ Սուրբ Սիոն միանավ եկեղեցին հնագույնն է (կառուցված կիսամշակ ավազաքարով) և ունի հայ ճարտարապետության համար եզակի հորինվածք, ուղղանկյուն թաղածածկ դահլիճը արևելքից և արևմուտքից ավարտվում է կիսաշրջանաձև աբսիդով: Նրան հարավից կից Սուրբ Աստվածածին եկեղեցին (1282-1283) նույնպես միանավ է, թաղածածկ, արևելքում՝ երկու միմյանց հավասար կիսաշրջանաձև աբսիդներով: Միանավ փոքրիկ մատուռը կից է Սուրբ Սիոն եկեղեցուն հյուսիսից: Պարսպապատ մենաստանի գերեզմանոցում կան XIII-XVII դդ. արձանագրություններով խաչքարեր: Գյուղամիջի Սուրբ Գևորգ եկեղեցին (XIX դար) երկու զույգ մույթերով եռանավ բազիլիկ է:Հերհերից հարավ պահպանվել են կիսավեր Սուրբ Գրիգոր Լուսավորիչ մատուռը (1296) և Սուրբ Գևորգ (Չիքի վանք, 1297) փոքր եկեղեցին, իսկ մոտ 1 կմ հարավարևելյան, լեռան գագաթին՝ «Կապույտ» ոչ մեծ բերդը (XIII-XIV դարեր): Հերհերից 3 կմ հյուսիս, գյուղատեղիում պահպանվել է կիսամշակ բազալտով կառուցված եկեղեցու աբսիդը, որի մոտ, պատվանդանի վրա կանգուն են երկու քանդակազարդ խաչքարեր: Գյուղատեղիի շրջակայքում կան 1282 թ. մեծ ու շքեղ խաչքար, XIII-XV դդ. պարզունակ քանդակներով ոչ մեծ խաչքարեր, կենցաղային թեմաներով քանդակազարդ տապանաքարեր:

Սարավան

Սարավան բնակավայրը վերաբնակեցվել է 1988թ-ին: Նախկինում՝ 781թ-ին Սարավան գյուղի տարածքում է գտնվել Թերփ բնակավայրը: Գյուղի տարածքում կան հին խաչքարեր և գերեզմանաքարեր: 1988թ-ից գյուղը բնակեցվել է երիտասարդ ընտանիքներով: Այն կազմված է երեք բնակավայրերից՝ Սարավան, Սարալանջ և Ուղեձոր: Սարավան գյուղը գտնվում է ծովի մակերևույթից 1600 մ բարձրության վրա: Լեռնային գյուղ է, շրջափակված է գեղեցիկ անտառներով: Համայնքի տարածքով է անցնում Երևան-Մեղրի միջպետական մայրուղին, որի աջ և ձախ կողմերում են գտնվում Սարավան և Սարալանջ գյուղերը: Բնակավայրը սահմանակից է Վայոց ձորի մարզի Արտավան, Գնդեվազ բնակավայրերին և Սյունիքի մարզի Գորհայք համայնքին: Գյուղում հիմնվել են նոր այգիներ, բնակչության մեծ մասն զբաղվում է անասնապահությամբ:

Վայք համայնքի քաղաքային բնակչությունը հիմնականում զբաղվում է առևտրով, հյուրանոցային բիզնեսով, սպասարկման ոլորտով, իսկ գյուղական բնակչությունը՝ անասնապահությամբ և հողագործությամբ, մեղվաբուծությամբ, պտղաբուծությամբ, ինչը ոչ բոլոր դեպքերում է ապահովում բավարար եկամուտներ ապրուստի միջոցները հոգալու համար, նպաստում համայնքի բնակչության միգրացիայի աճին, հետևաբար համայնքում առաջնային անհրաժեշտություն է աշխատատեղերի ստեղծումը:

Վայք խորոշարցված համայնքն ունի բազմաթիվ կարիքներ, որոնք օրակարգային հարցեր են՝ նորացված գյուղատնտեսական տեխնիկայի ձեռքբերում, փողոցային լուսավորության խնդիրներ, աղբահանություն, ներհամայնքային և հանդամասային ճանապարհների բարեկարգում: Գյուղական ոչ բոլոր բնակավայրերում կան երիտասարդական և այլ ժամանացային կենտրոններ: Համայնքը գտնվում է Վայոց Ձոր մարզի աշխարհագրական կենտրոնում: Այն հանդիսանում է տուրիստական ճամփորդությունների խաչմերուկ՝ համայնքով է անցնում դեպի Ջերմուկ, Սյունիք և Իրանի Իսլամական Հանրապետություն տանող ճանապարհները:

Բնակավայրերը	**Ընդ. բնակիչ**	**տղամարդիկ**	**կանայք**	**63 տ.և բարձր թոշակառուներ**	**Աշխատունակ բնակիչ**
Վայք քաղաք	6593	3343	3250	1990	2850
Զառիթափ	1416	715	701	277	920
Սարավան	305	147	158	64	102
Արտավան	320	175	145	37	170
Գոմք	260	118	142	38	95
Մարտիրոս	603	318	285	104	384
Սերս	220	108	112	32	150
Բարձրունի	386	323	154	62	232
Խնձորուտ	529	269	271	85	296
Նոր Ազնաբերդ	150	76	74	23	34
Զեղեա	156	75	81	22	95
Հերհեր	671	354	317	123	384
Արին	309	159	150	61	175
Կարմրաշեն	200	118	82	44	76
Փոռ	110	67	43	25	48
Ազաատեկ	610	310	300	110	329

ընդամենը	12875	6675	6200	2820	6040

ՍԵՌԱՏԱՐԻՔԱՅԻՆ ՍԱՆԴՂԱԿ



ՏԱՐԻՔԱՅԻՆ ՍԱՆԴՂԱԿ

Տարի	Ծնունդների թիվը	Մահերի թիվը	Բնական աճը
2019	56	53	3
2020	36	81	-45
2021	60	49	11
2022	119	108	11
2023	131	101	30

2024	111	118	-7

ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԲՆԱԿԱՆ ԱՃԸ՝



2 Համայնքի տեսլականը և ոլորտային նպատակները

Համայնքի տեսլականը՝

Վայք համայնքը բարեկարգ և բարեկեցիկ համայնք է՝ զարգացած գյուղատնտեսությամբ ու ենթակառուցվածքներով, որտեղ բնակչության գերակշիռ մասն ունի զբաղվածություն և բավարար կենսապայմաններ:

Աղյուսակ 1.Համայնքի կայուն զարգացման ցուցանիշները

Ցուցանիշ	Բազային արժեք	Թիրախային արժեք
Աղքատության շեմից ցածր գտնվող ընտանիքների թվի տեսակարար կշիռը համայնքի ընտանիքների ընդհանուր թվի մեջ (%)	0	
Համայնքի բյուջեի սեփական եկամուտների տեսակարար կշիռն ընդհանուր եկամուտների մեջ (%)	35.2	
Համայնքում հաշվառված բնակիչների ընդհանուր թիվը (մարդ), այդ թվում՝	12875	
Այլ ցուցանիշ		

Աղյուսակ 2. Համայնքի ոլորտային նպատակները

Ոլորտային նպատակ	Վերջնական արդյունքի՝		
	Ցուցանիշ	Ելակետային արժեք	Թիրախային արժեք
Ոլորտ 1. Ընդհանուր: Ապահովել տեղական ինքնակառավարումը Վայք բազմաբնակավայր համայնքում, ունենալ բնակչությանը մատուցվող համայնքային ծառայությունների արդյունավետ և թափանցիկ կառավարման համակարգ	Տեղական ինքնակառավարման մարմինների արդյունավետ, հասցեական, մասնակցային և ուղենշված գործունեություն, %	**80**	**85**
Ոլորտ 2. Քաղաքաշինություն և կոմունալ տնտեսություն: **1**.Կազմակերպել համայնքի քաղաքաշինական նորմերի, համայնքային գույքի և ենթակառուցվածքների, հանրային վայրերի պահպանումն ու զարգացումը **2**.Ապահովել համայնքի բնակիչների առողջության և շրջակա միջավայրի վրա աղբի բացասական ներգործության նվազեցումն ու չեզոքացումը **3.**Ստեղծել բնակության համար հարմարավետ և էկոլոգիապես անվտանգ պայմաններ **4**.Ապահովել համայնքի քաղաքաշինական զարգացման նորմերը	Համայնքային գույքի և ենթակառուցվածքների, հանրային վայրերի բարելավված վիճակը, % Սանիտարահիգիենիկ ու էկոլոգիական պայմանների ապահովումը, % Հանրային տարածքների մաքրության աստիճանը, % Համայնքի գլխավոր հատակագծի առկայություն	**82** **30** **70** **այո**	**90** **35** **90** **այո**
Ոլորտ 3. Կրթություն: Կազմակերպել նախադպրոցական կրթության և արտադպրոցական դաստիարակության որակյալ ծառայություններ	Նախադպրոցական կրթության և դաստիրակության ծառայության որակը, %	**90**	**95**
Ոլորտ 4. Մշակույթ և երիտասարդության հետ տարվող աշխատանքներ: Կազմակերպել համայնքի մշակութային կյանքը, աջակցել մշակութային նախաձեռնությունների իրականացմանը, խթանել միջոցառումներին բնակիչների ակտիվ մասնակցությունը	Համայնքի մշակութային նախաձեռնություններին բնակիչների մասնակցությունը, %	**65**	**75**
Ոլորտ 5. Սոցիալական պաշտպանություն: Բարելավել համայնքի	Սոցիալական աջակցություն ստացող	**85**	**80**

կարիքավոր ընտանիքների սոցիալական վիճակը	անապահով ընտանիքների տեսակարար կշիռը համայնքում առկա սոցիալապես կարիքավոր ընտանիքների մեջ, %		
Ոլորտ 6. Գյուղատնտեսություն: Նպաստել համայնքում գյուղատնտեսության զարգացմանը	Մշակվող հողատարածքների տեսակարար կշիռը ընդհանուր գյուղատնտեսական նշանակության հողերի մեջ%	**82**	**98**
Ոլորտ 7. Տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցություն: Ապահովել ՏԻՄ գործունեության մասին տեղեկատվության հասանելիությունը համայնքի բնակիչներին, ներգրավել նրանց համայնքային որոշումների կայացման գործում	Համայնքային բյուջեի, հնգամյա զարգացման և տարեկան պլանների, հաշվետվությունների հանրային լսումների կազմակերպում	**93**	**95**

1. 2025 ԹՎԱԿԱՆԻՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԾՐԱԳՐԵՐԸ

Զարգացման ծրագրերի շրջանակներում համայնքում նախատեսվում է 2025 թվականին իրականացնել հետևյալ ծրագրերը՝

1. Համայնքի մեքենատրակտորային պարկի թարմացում:
2. Վայքի խոշորացված համայնքի բոլոր բնակավայրերում առկա ջրագծերի կապիտալ նորոգում և նոր ոռոգման համկարարգերի կառուցում և շահագործում:
3. Աղբահանության համակարգի բարելավում, այդ թվում նոր աղբամանների ձեքբերում, գյուղական համայնքներում աղբահանության կազմակերպման բարելավում, աղբավայրերի բարեկարգում և ծառատնկման աշխատանքներ:
4. Զբոսաշրջությանը վերաբերվող ծրագրերին ակտիվ մասնակցություն և խթանում:
5. Ազատեկ, Արին բնակավայրերի ջրագծերի , գլխամասային կառույցների ներքին և արտաքին ցանցերի հիմնանորոգում:
6. Վայք համայնքի Վայք քաղաքի բազմաբնակարան շենքերի տանիքների օդատար և ծխատար խողովակների վերականգնման աշխատանքներ:
7. Վայք համայնքի 15 բնակավայրերի ներբնակավայրային փողոցների ասֆալտապատում:
8. Վայք համայնքի Վայք քաղաքի մայր ջրատարի հիմնանորոգում:
9. Վայք քաղաքի մշակույթի տան հիմնանորոգում:
10. Ազատեկ բնակավայրի խմելու ջրի ջրագծի հիմնանորոգում:
11. Համայնքի բնակավայրերում լուսավորության համակարգի անցկացում:
12. Համայնքի բնակավայրերում հանդամիջյան ճանապարհների բարեկարգում:
13. Վայք համայնքի գյուղական բնակավայրերում արտադպրոցական ուսուցման կազմակերպում՝ կրթական ավտոբուսի ներդրմամբ:
14. Վայք համայնքի Նոր Ազնաբերդ բնակավայում վարչական շենքի կառուցում:

2.ՀԱՄԱՅՆՔԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐ

15. Վայք համայնքի 2025թ. բյուջեն մշակվել է՝ հիմք ունենալով համայնքի 2022 - 2026թթ. հնգամյա զարգացման ծրագիրը և 2025թ. տարեկան աշխատանքային պլանը:
16. Համայնքի գործունեությունը մեծապես կախված է բյուջետային գործընթացի լավ կազմակերպումից, բյուջեի եկամուտների արդյունավետ հավաքագրումից և միջոցների խնայողական օգտագործումից:
17. Համայնքի 2025 թ. բյուջետային քաղաքականության հիմնական ուղղություններն են՝
18. Բարելավել համայնքի ֆինանսական վիճակը՝ ճշտելով հողի հարկի, գույքահարկի, անշարժ գույքի հարկի բազաները, բարձրացնելով սեփական եկամուտների հավաքագրման մակարդակը և նպատակային օգտագործելով բյուջետային միջոցները,
19. Բարձրացնել ՏԻՄ-ի, համայնքապետարանի աշխատակազմի և համայնքային ենթակայության կազմակերպությունների աշխատանքի արդյունավետությունը,
20. Բարձրացնել քաղաքային ու գյուղական բնակավայրերում բնակչությանը մատուցվող համայնքային ծառայությունների մակարդակը և որակը,
21. Կապիտալ ներդրումներ կատարել համայնքի բարեկարգման, ոռոգման, ջրամատակարարման և ճանապարհային տնտեսության բնագավառներում,
22. Աշխուժացնել համայնքի մշակութային, մարզական և հասարակական կյանքը,
23. Նպաստել համայնքում հողագործության և անասնապահության աճին,
24. Իրականացնել սոցիալական տարաբնույթ ծրագրեր, օժանդակել սահմանների պաշտպանությանը, կանխել արտագաղթը, ձեռնարկել միջոցառումներ արտակարգ իրավիճակներում և այլն:
25. Համայնքի բյուջեի միջոցների հաշվին պահպանվող ՀՈԱԿ-ներում 2025թ. նախատեսվել է 216 հաստիքային միավոր, իսկ աշխատավարձի ֆոնդի համար՝ 333812,0 հազ. դրամ:
26. Համայնքի 2025թ. սոցիալ-տնտեսական զարգացման հիմնական ուղղությունները միտված են բնակչության կենսական շահերի ապահովմանն ու վիճակի բարելավմանը, շրջակա միջավայրի պահպանմանը, համայնքի հարմարավետ և բարեկեցիկ միջավայրի ստեղծմանը, համայնքային ենթակառուցվածքների արդիականացմանը, քաղաքային ու գյուղական բնակավայրերի համաչափ զարգացմանը, ինպես նաև համայնքի գլխավոր հատակագծին համապատասխան քաղաքաշինական ծրագրերի իրականացմանը:
27.
28. Ներկայացնում եմ Վայք համայնքի 2025 թվականի բյուջեի եկամտային ու ծախսային մասերը՝ ըստ գործառնական և տնտեսագիտական դասակարգման.
29.
30. Համայնքի բյուջեի եկամտային մաս – 1017683,7 հազ. դրամ, այդ թվում՝
31. Վարչական մասի եկամուտներ – 1007683,7 հազ. դրամ, որից՝
32. Հողի հարկ՝ 2000,0 հազ. դրամ

33. Գույքահարկ շենքերի և շինությունների համար՝ 1000,0 հազ. դրամ
34. Անշարժ գույքի հարկ՝ 28500,0 հազ. դրամ
35. Գույքահարկ փոխադրամիջոցների համար՝ 84700,0 հազ. դրամ
36. Տեղական տուրքեր՝ 10800,0 հազ. դրամ
37.
38. Պետական տուրքեր՝ 4000,0 հազ. դրամ
39. Պետբյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիա՝ 636411,5 հազ. դրամ
40. Պետական բյուջեից տրամադրվող նպատակային հատկացումներ՝ 3742,1 հազ. դրամ
41. Համայնքի սեփականություն համարվող հողերի և այլ գույքի վարձավճարներ՝ 152530,1 հազ. դրամ
Տեղական վճարներ՝ 27800,0 հազ. դրամ
42. Այլ եկամուտներ՝ 56200,0 հազ. դրամ:
43. Ֆոնդային մասի եկամուտներ - 10000,0 հազ. դրամ, որից՝
44. Կապիտալ ոչ պաշտոնական դրամաշնորհներ՝ 10000,0 հազ. դրամ:
45.
46. Տարեսկզբի ազատ մնացորդ – 211440,6 հազ. դրամ, որից՝
47. Վարչական մասի մնացորդ՝ 6325,6 հազ. դրամ
48. Ֆոնդային մասի մնացորդ՝ 205115,0 հազ. դրամ:

49. Համայնքի բյուջեի ծախսային մաս – 1229124,3 հազ. դրամ, այդ թվում՝
50.
51. 01.1.1 - Օրենսդիր և գործադիր մարմիններ, պետական կառավարում՝ 329800,0 հազ. դրամ, այդ թվում՝
52. -Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ 4111 - 265000,0 հազ. դրամ
53. -Պարգևատրումներ, դրամական խրախուսումներ և հավելավճարներ 4112 - 27000,0 հազ. դրամ
54. -Էներգետիկ ծառայություններ 4212 - 11000,0 հազ. դրամ
55. -Կոմունալ ծառայություններ 4213 - 600,0 հազ. դրամ
56. -Կապի ծառայություններ 4214 - 2800,0 հազ. դրամ
57. -Ապահովագրական ծախսեր 4215 - 900,0 հազ. դրամ
58. -Ներքին գործուղումներ 4221 - 900,0 հազ. դրամ
-Համակարգչային ծառայություններ 4232 - 4800,0 հազ. դրամ
59. -Տեղակատվական ծառայություններ 4234 - 600,0 հազ. դրամ
60. -Մասնագիտական ծառայություններ 4241 - 3000,0 հազ. դրամ
61. -Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում 4251 - 1500,0 հազ. դրամ
62. -Մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում և պահպանում 4252 - 1400,0 հազ. դրամ
63. -Գրասենյակային նյութեր և հագուստ 4261 - 1500,0 հազ. դրամ
64. -Տրանսպորտային նյութեր 4264 - 2500,0 հազ. դրամ

65.-Կենցաղային և հանրային սննդի նյութեր 4267 - 2500,0 հազ. դրամ
66. -Հատուկ նպատակային այլ նյութեր 4269 - 1400,0 հազ. դրամ
67.-Պարտադիր վճարներ 4823 - 400,0 հազ. դրամ
68. -Վարչական սարքավորումներ 5122 - 2000,0 հազ. դրամ
69. 01.3.1 - Աշխատակազմի /կադրերի/ գծով ընդհանուր բնույթի ծառայություններ՝ 1999,0 հազ. դրամ, այդ թվում՝
70.- Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ 4111 - 1999,0 հազ. դրամ
71. 01.6.1 - Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ՝ 52500,0 հազ. դրամ, այդ թվում՝
72. -Գույքի և սարքավորումների վարձակալություն 4216 - 1000,0 հազ. դրամ
73. -Ներքին գործուղումներ 4221 - 900,0 հազ. դրամ
-Ներկայացուցչական ծախսեր 4237 - 500,0 հազ. դրամ
74.-Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ 4239 - 900,0 հազ. դրամ
75.-Մասնագիտական ծառայություններ 4241 - 12000,0 հազ. դրամ
76.-Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում 4251 - 15000,0 հազ. դրամ
77.-Մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում և պահպանում 4252 - 1500,0 հազ. դրամ
78.-Կենցաղային և հանրային սննդի նյութեր 4267 - 900,0 հազ. դրամ
79.-Հատուկ նպատակային այլ նյութեր 4269 - 5000,0 հազ. դրամ
80. -Այլ կապիտալ դրամաշնորհներ 4657 - 4000,0 հազ. դրամ
81.-Նվիրատվություններ այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին 4819 - 1000,0 հազ. դրամ
82.-Պարտադիր վճարներ 4823 - 3600,0 հազ. դրամ
83.-Նախագծահետազոտական ծախսեր 5134 - 6200,0 հազ. դրամ
84.04.2.1 - Գյուղատնտեսություն՝ 86480,0 հազ. դրամ, այդ թվում՝
85.-Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքների ոչ առևտրային կազմակերպություններին 4637 - 86380,0 հազ. դրամ
86. -Կապիտալ դրամաշնորհներ պետական և համայնքների ոչ առևտրային կազմակերպություններին 4655 - 100,0 հազ. դրամ
87.04.5.1 - Ճանապարհային տրանսպորտ՝ 185415,0 հազ. դրամ, այդ թվում՝
-Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում 5113 - 180915,0 հազ. դրամ
88. -Նախագծահետազոտական ծախսեր 5134 - 4500,0 հազ. դրամ
89.
90.
91. 05.1.1 - Աղբահանում՝ 85000,0 հազ. դրամ, այդ թվում՝
92.-Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքների ոչ առևտրային կազմակերպություններին 4637 - 84140,0 հազ. դրամ
93.-Կապիտալ դրամաշնորհներ պետական և համայնքների ոչ առևտրային կազմակերպություններին 4655 - 860,0 հազ. դրամ
94.06.3.1 - Ջրամատակարարում՝ 10000,0 հազ. դրամ, այդ թվում՝
-Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում 5113 - 10000,0 հազ. դրամ

95.06.4.1 - Փողոցների լուսավորում՝ 19000,0 հազ. դրամ, այդ թվում՝
96. -էներգետիկ ծառայություններ 4212 - 19000,0 հազ. դրամ
97.08.2.3 - Մշակույթի տներ, ակումբներ, կենտրոններ՝ 33600,0 հազ. դրամ, այդ թվում՝
-Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքների ոչ առևտրային կազմակերպություններին 4637 - 22000,0 հազ. դրամ
98. -Կապիտալ դրամաշնորհներ պետական և համայնքների ոչ առևտրային կազմակերպություններին 4655 - 600,0 հազ. դրամ
99. -Նախագծահետազոտական ծախսեր 5134 - 11000,0 հազ. դրամ
100. 08.2.4 - Այլ մշակութային կազմակերպություններ՝ 49100,0 հազ. դրամ, այդ թվում՝
101. -Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ 4239 - 4000,0 հազ. դրամ
102. -Հատուկ նպատակային այլ նյութեր 4269 - 2500,0 հազ. դրամ
103. -Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքների ոչ առևտրային կազմակերպություններին 4637 - 42600,0 հազ. դրամ
104. 09.1.1 - Նախադպրոցական կրթություն՝ 132820,0 հազ. դրամ, այդ թվում՝
-Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքների ոչ առևտրային կազմակերպություններին 4637 - 127120,0 հազ. դրամ
105. -Կապիտալ դրամաշնորհներ պետական և համայնքների ոչ առևտրային կազմակերպություններին 4655 - 5200,0 հազ. դրամ
106. -Նախագծահետազոտական ծախսեր 5134 - 500,0 հազ. դրամ
107. 09.5.1 - Արտադպրոցական դաստիարակություն՝ 53560,0 հազ. դրամ, այդ թվում՝
-Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքների ոչ առևտրային կազմակերպություններին 4637 - 50560,0 հազ. դրամ
108. -Կապիտալ դրամաշնորհներ պետական և համայնքների ոչ առևտրային կազմակերպություններին 4655 - 3000,0 հազ. դրամ
109. 10.7.1 - Սոցիալական հատուկ արտոնություններ /այլ դասերին չպատկանող/՝ 4000,0 հազ. դրամ, այդ թվում՝
110. -Այլ նպաստներ բյուջեից 4729 – 4000,0 հազ. դրամ
111. 11.1.2 - Համայնքի պահուստային ֆոնդ՝ 185850,3 հազ. դրամ, այդ թվում՝
112. -Պահուստային միջոցներ 4891 - 185850,3 հազ. դրամ:
113.
114. Հիշեցնում եմ համայնքի տեսլականը. Վայք համայնքը բարեկարգ և բարեկեցիկ բազմաբնակավայր համայնք է՝ զարգացած գյուղատնտեսությամբ, զբոսաշրջությամբ ու սոցիալական ենթակառուցվածքներով, որտեղ բնակչության գերակշիռ մասն ապահովված է եկամտաբեր աշխատանքով և ունի բավարար կենսապայմաններ:
115. Դիմում եմ համայնքի բնակիչներին, ավագանու անդամներին, աշխատակազմի և համայնքային ենթակայության կազմակերպությունների աշխատակիցներին՝ շահագրգիռ մոտեցում ցուցաբերելու համայնքի 2025թ. բյուջեի միջոցների գոյացման, դրանց նպատակային ու հասցեական օգտագործման, բյուջեի կատարման և վերահսկման ուղղություններով:

3.Համայնքի ուժեղ և թույլ կողմերի, հնարավորությունների և սպառնալիքների (ՈՒԹՀՍ) վերլուծություն

Ուժեղ	Թույլ
Բնական մրցակցային առավելություններ	• Համայնքի բրենդավորման բացակայություն • Գյուղական բնակավայրերում հեղեղատարների և ջրահեռացման համակարգերի ոչ բավարար վիճակ • Վայք քաղաքում սակավ կանաչապատ տարածքներ • Համայնքային ենթակայության կառույցների վերանորոգման և գույքի թարմացման անհրաժեշտություն • Գործազրկության բարձր մակարդակ • Ժամանցային վայրերի սահմանափակ հնարավորություն • Ֆինանսական այլընտրանքային միջոցների բացակայութուն • Միջին մասնագիտական կրթություն ունեցող աշխատանքային ռեսուրսների պակաս • Զբոսաշրջության համար անհրաժեշտ ենթակառուցվածքների պակաս
• Ջրային ռեսուրսների առկայություն • Ոսկու, բազալտի հանքավայրեր • Սոչոբասանյանին Ջերմուկ քաղաքին հարևանություն • Մաքուր բնություն, մեղմ, տաք կլիմա • Արևային օրերի ռեկորդային քանակ • Միջսեզոնային մայրուղին հեղուցայում, Հյուսիս-Հարավ ավտոմայրուղին այնցնում է համայնքի միջով • Բնական և ատամնամշակութային բազմաթիվ հուշարձաններ • Գյուղատնտեսական նշանակության մեծաքանակ հողերի առկայություն • Ինքնահոս ոռոգում • Բազմազան ոստերի և դեղաբույսերի առկայություն • Բարձրագույն կրթություն ունեցող մարդկային ռեսուրսներ	
Մասնագիտական, մարդկային մրցակցային առավելություններ	
• Տուրիզմի զարգացման մասնագետներ • Տեխնոլոգներ • Ինժեներներ, երկրաբաններ բժիշկներ, ֆինանսիստներ: • Գործարար ունակություններով մարդկանց մեծ տեսակարար կշիռ • Մեքենաշինության բարձրորակ մասնագետներ • Բարձրագույն կրթություն ունեցող	

մարդկանց մեծ տեսակարար կշիռ	
Տեխնոլոգիական մրցակցային առավելություններ	
• Տնայնան օրոյ, գինու, ոգեպոհ ավանդական տեխնոլոգիաներ • Սառնարանային տնտեսություններ • Գինեգործության ժամանակակից տեխնոլոգիաներ • Սրճեգործության ժամանակակից տեխնոլոգիաներ • Մրգի վերամշակման (չիր, օրի) մրցունակ տեխնոլոգիաներ	
ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ	**ՍՊԱՌՆԱԼԻՔ**
• Վայք համայնքն իր աշխարհագրական դիրքով գտնվում է մարզի կենտրոնում • Համայնքի միջով է անցնում միջպետական մայրուղին • Համայնք այցելող զբոսաշրջության աճ • ՏԻՄ ոլորտում միջազգային կազմակերպությունների կողմից իրականացվող ծրագրերի շարունակական բնույթ և աճ • Համագործակցության շրջանակների ընդլայնում • Տարբեր միջազգային կառույցների, հիմնադրամների և բարեգործական կազմակերպությունների հետ համագործակցություն • Գյուղական բնակավայրերում	• Գործազրկության բարձր մակարդակ • Ներդրումների անբավարար մակարդակ • Շրջակա միջավայրի նկատմամբ անտարբերություն • Ֆինանսական այլընտրանքային միջոցների ռեսուրսների բացակայություն

միջոցառումների կազմակերպում • Ներդրողների ներգրավում	

4 Համայնքի զարգացման ծրագրերի, նպատակների առաջադրում և կոնկրետ խնդիրների ձևակերպում

Ստորև ներկայացվում է համայնքի զարգացման ծրագրերի, նպատակների առաջադրում և կոնկրետ խնդիրների ձևակերպում՝ ըստ առանձին բնագավառների.

- ՀՀ Վայոց Ձոր Վայք համայնքի Արին - Կարմրաշեն բնակավայրերի ջրագծի, գլխամասային կառույցների հիմնանորոգման աշխատանքներ՝ նախահաշվային արժեքը 432 000 000 ՀՀ դրամ:
- Վայք համայնքի Ազատեկ բնակավայրի խմելու ջրի ջրագծերի, գլխամասային կառույցների արտաքին ցանցերի հիմնանորոգում՝ 4139 գծմ, նախահաշվային արժեքը ՝ 53 594 780 ՀՀ դրամ:
- Վայք համայնքի Վայք քաղաքի բազմաբնակարան շենքերի տանիքների օդատար և ծխատար խողովակների վերականգնման աշխատանքներ:
  Ծրագրի արժեքը՝ 33 000 000 ՀՀ դրամ:
- ՀՀ Վայոց ձորի Վայք համայնքի 15 բնակավայրերի միջբնակավայրային փողոցների մասնակի ասֆալտապատման աշխատանքներ՝/ նախահաշվային արժեքը՝477 867 140 ՀՀ դրամ/:
- Մարտիրոս բնակավայրի փողոցի ասֆալտապատում/նախահաշվային արժեքը՝ 91 426 700 ՀՀ դրամ/:

:

5. ՎԱՃՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՇԵՆՔԵՐԻ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՄԵՆԱՄՅԱ ՕՏԱՐՄԱՆ ՑԱՆԿԸ

Հ/հ	**Օտարման ենթակա գույքի անվանումը**	**Վաճառքի հնարավոր արժեքը /դրամ/**
1.	Բնակելի տարածք	1422 շինության 1քմ-ի համար
	Ընդամենը՝	

6. ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՕՏԱՐՎՈՂ ՀՈՂԱՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՑԱՆԿ

Հ/h	**Հասցեն**	**Մակերեսը**	**Ծածկագիրը**	**Գործառն.նշանակ.**
1	Վայք	0.80հա		բնակավայրերի
2	Ազատեկ	3,0հա		Գյուղ. նշանակության
3	Փոռ	3,0հա		Գյուղ. նշանակության
4	Ջեդեա	3,0հա		Գյուղ. նշանակության
5	Արին	3,0հա		Գյուղ. նշանակության
6	Ջառիթափ	3,0հա		Գյուղ. նշանակության
7	Մարտիրոս	3,0հա		Գյուղ. նշանակության
8	Սերս	3,0հա		Գյուղ. նշանակության
9	Բարձրունի	3,0հա		Գյուղ. նշանակության
10	Խնձորուտ	3,0հա		Գյուղ. նշանակության
11	Նոր Ազնաբերդ	3,0հա		Գյուղ. նշանակության
12	Գոմք	22,0հա		Գյուղ. նշանակության
13	Սարավան	3,0հա		Գյուղ. նշանակության
14	Արտավան	3,0հա		Գյուղ. նշանակության
15	Հերհեր	150,0հա		Գյուղ. նշանակության
16	Կարմրաշեն	3,0հա		Գյուղ. նշանակության

7. ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԵՐԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՑԱՆԿ

Հ/h	**Հասցեն**	**Մակերեսը**	**Ծածկագիրը**	**Գործառն.նշանակ.**
1	Գյուղատնտեսական նշանակության	15,0հա		գյուղ.նշանակություն

8.Վայք համայնքի աղբահանության պլանավորման ցուցանիշները

8.1 Պլանավորման տարածքի նկարագրություն:

[redacted]	[redacted]	[redacted]	[redacted]	[redacted]	[redacted]	[redacted]
[redacted]	95 016,76	926,36	94 090,40	1217,71	73075,69	5702,59
[redacted]	100	0,97	99,02	1,28	76,90	6,0

8.2 Թափոն գոյացնող հիմնական աղբյուրների տեսակները

[redacted]	[redacted]	[redacted]
[redacted]	1910	
[redacted]	49	
[redacted]	1861	
[redacted]	166	
[redacted]	138	
[redacted]	3	
[redacted]	5	
[redacted]	2	

[redacted]	18	
[redacted]	0	

[redacted]	[redacted]	[redacted]	[redacted]	[redacted]	[redacted]	[redacted]	[redacted]	[redacted]	[redacted]	[redacted]
[redacted]	[redacted]220	907	100%					100%		Վայք համայնքի «Վայքի բարեկարգում» ՀՈԱԿ-ը զբաղվում է միայն կենցաղային աղբի հավաքմամբ,տեղափոխմամբ՝ համայնքային աղբավայրում
[redacted]										
[redacted]	[redacted]0.31	20	10%							
[redacted]										
[redacted]										Անվադողերը հավաքվում են բնակչության կողմից և վերակիրառվում են պաշտպանական

										ինժեներական ենթակառուցվածքներում
[redacted]										
[redacted]										
[redacted]										
[redacted]										

[redacted]	[redacted]	[redacted]	[redacted]	[redacted]	[redacted]	[redacted]
[redacted]	50					
[redacted]	0	0	0	0	0	
[redacted]	35					
[redacted]	0	0	0	0	0	
[redacted]	0					

[redacted]	[redacted]	[redacted]	[redacted]	[redacted]	[redacted]	[redacted]	[redacted]
1 Վայք համայնքի «Վայքի բարեկարգում» ՀՈԱԿ	Ք.Վայք , Արին,Փոռ,ՀերՀեր ,Ազատեկ,Մարտիրոս, Կարմրաշեն,Գոմք, Սերս,Զառիթափ,Արտավան,Նոր Ազնաբերդ,Բարձրունի,Խնձորուտ,Սարավան, Զեղեա	11110	4	1/Կամազ КО-440-К1 / 7-ԽՄ տարողություն 2/Զիլ КО-44910/ 10-ԽՄ տարողություն 3/ Զիլ КО-424 10-ԽՄ տարողություն, MAZ 449-41 13- ԽՄ տարողություն	Խառը	5	